

Արմեն Յ. Մարության  
պատմ. գիտ. թեկնածու

**ԹՈՒՐԳԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ**

Ամփոփում և առաջարկներ\*

Այն փաստը, որ Հայոց Մեծ եղեռնը արդեն 95 տարի մնում է անպատիժ, բացատրվում է ոչ միայն քաղաքական դրդապատճառներով, այլև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական աշխատակարգերի անորոշությամբ:

Անշուշտ, բազմաթիվ հայ և օտարազգի մասնագետներ միջազգային իրավունքի տեսանկյունից ժամանակին հիմնավորել են Թուրքիայի պատասխանատվությունը հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հանցագործության համար: Սփյուռքում հայ մասնագետներից այս հիմնահարցով առաջինը լրջորեն զբաղվել է **Շավարշ Թորիկյանը**<sup>1</sup>, իսկ ահա վերջին տասնամյակներում շոշափելի աշխատանք է կատարվել հայտնի իրավաբան-միջազգայնագետ **Յուրի Բարսեղովի** կողմից<sup>2</sup>: Ուշագրավ են նաև **Ի.Արաբյանի**<sup>3</sup>,

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 03.03.2010.  
1 Տե՛ս Թորիկյան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրոս 1976:  
2 Տե՛ս Барсегов Ю. Геноцид армян-преступление против человечества, Ер., 1990; Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, Ер., 1995; Ответственность государства за геноцид в международном праве, “Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума”, М., 1997; Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999; Геноцид армян – преступление по международному праву, М., 2000; Турецкая доктрина международного права на службе политики геноцида, М., 2002; К вопросу о применимости конвенции 1948 года к геноциду армян, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 1, М., 2004; Новый этап признаний как условие реализации ответственности Турции за геноцид, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ер., 2005.  
3 Տե՛ս Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996:

Բ(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010  
**ՎԵՄ համահայկական հանդես**

**Պ.Օհանյանի<sup>4</sup>, Հ.Հակոբյանի<sup>5</sup>, Վ.Տատրյանի<sup>6</sup>, Վ.Մարգարյանի<sup>7</sup>**, իսկ օտարագրի մասնագետներից՝ **Իվ Տերնոնի<sup>8</sup>** ուսումնասիրություններն ու հրապարակումները:

Սակայն, պետք է նշել, որ իրավական հարթության վրա մինչ օրս կատարված հետազոտությունները կրում են ավելի շատ գիտատեսական բնույթ, այնինչ՝ անհրաժեշտ է պատմական փաստերը և միջազգային իրավունքի տեսական դրույթները տեղափոխել գործնական-կիրառական հարթություն: Հարկավոր է հստակ պատկերացնել, թե արդի միջազգային իրավունքը ի՞նչ գործնական հնարավորություններ է ընձեռում ցեղասպանության գոհ հանդիսացող հայ ժողովրդին՝ հասնելու այդ հանցագործության իրավական դատապարտմանը և հետևանքների վերացմանը:

**Ուստի, հրապարակի վրա եղած պատմաիրավական ուսումնասիրությունների, ինչպես նաև միջազգային իրավական նորմերի հիման վրա փորձենք ցույց տալ այն կոնկրետ հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման և Հայ Դատի արդարացի լուծման համար:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքը մեծապես հենվում է **նախադեպերի** վրա, մեթոդաբանական առումով նպատակահարմար ենք համարում ուսումնասիրել այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ցեղասպանությունների դատապարտման գործընթացները՝ փորձելով դրանք դիտարկել իբրև նախադեպեր Հայոց ցեղասպանության դատապարտման համար: Խոսքը մասնավորապես **հրեաների, Ռուանդայի** և այլ ցեղասպանությունների դատապարտման փաստերի մասին է, որոնք միջազգային իրավունքի տեսակետից կարող են գործնական-կիրառական նշանակություն ունենալ և հիմք դառնալ Հայոց ցեղասպանության դատապարտման համար:

Այս առումով կարևոր նշանակություն ունեն նաև միջազգային տարբեր **կազմակերպությունների ու ատյանների կողմից** Հայոց ցեղասպանությանը տրված որակումներն ու մեկնաբանությունները, որոնք նույնպես կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման, ինչպես նաև տվյալ կառույցների գործնական աջակցությունն ու օժանդակությունը ստանալու համար:

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման առումով կարևոր նշանակություն ունեն **միջազգային պայմանագրերը, կոնվենցիաները**՝ այն իմաստով, որ դրանց դրույթների ու հոդվածների վրա հենվելով՝ կարելի է

4 Տե՛ս Օղանյան Ս. Գеноцид армянского народа и защита прав человека, Ер., 2004.

5 Տե՛ս Չակոբյան Հ., Չայրենիք վերադառնալու զաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000:

6 Տե՛ս Դադրյան Բ. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, “Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума”, М., 1997.

7 Տե՛ս Մարգարյան Վ., Չայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, “Չայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր”, N 8, Եր., 2003; Основания международной ответственности за геноцид армян, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ер., 2005.

8 Տե՛ս Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., 2003:

ձևակերպել ու ներկայացնել այնպիսի իրավական պահանջներ, որոնք միջազգային իրավունքի տեսակետից լինեն անխոցելի և ընդունելի՝ միջազգային հանրության համար:

Որոշ դատավարությունների, մասնավորապես՝ **երիտրոպների** դատավարության և **Սողոմոն Թեփրյանի** դատական գործի նյութերը նույնպես կարող են լրացուցիչ հիմքեր ստեղծել և օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համար:

Այս իմաստով պետք է նշել, որ վերջերս թուրքերի մոտ նույնպես նկատվում են Հայոց ցեղասպանության մասին «հայկական պնդումները» միջազգային իրավունքի տեսանկյունից քննելու փորձեր: Թուրքական պետությունը, ըստ էության, պատվեր է տվել թուրք մասնագետներին՝ միջազգային-իրավական տեսանկյունից «հիմնավորել», թե իբր, անցած դարասկզբին հայերի հետ Օսմանյան կայսրությունում կատարված իրադարձությունները չեն համապատասխանում ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Յեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի դրույթներին, որպեսզի հնարավոր լինի կասեցնել նրա միջազգային ճանաչման գործընթացը<sup>9</sup>: Այսպիսով, թուրքերն էլ են գիտակցում, որ ներկա իրավիճակում առկա հիմնախնդիրը պատմական հարթությունից կարող է տեղափոխվել միջազգային-իրավական դաշտ, ուստի շտապում են ձևավորել միջազգային-իրավական մի այնպիսի «հայեցակարգ», որով հնարավոր կլինի չեզոքացնել Թուրքիային սպառնացող վտանգը: Ինչպես դա ժամանակին տեղի ունեցավ կեղծ-պատմական հայեցակարգի ստեղծման հետ կապված, որով Թուրքիայում փորձում էին ժխտել Հայոց ցեղասպանության եղելությունը, այժմ նույնը տեղի է ունենում կեղծ-իրավական հայեցակարգի ստեղծման նպատակով: Թերևս իրենք թուրքերն էլ են գիտակցում Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը միջազգային-իրավական դաշտ տեղափոխվելու՝ Թուրքիայի համար տխուր հեռանկարները: Ուստի տանուլ տալով պատմագիտական բանավեճը՝ նրանք շտապում են մեզանից առաջ անցնել իրավաքաղաքական հարթության վրա՝ զարգացումների հաջորդ հանգրվանին պատրաստ լինելու համար:

Դրա հետ կապված՝ 2000թ. վերջերին և 2001թ. սկզբներին Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավը, թերևս առաջին անգամ, քննարկեց պայքարի միջազգային-իրավական մեթոդներին դիմելու իր հնարավորությունները: Առաջին քննարկումը տեղի ունեցավ 2000թ. սեպտեմբերի 29-ին՝ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում, որի ընթացքում, ըստ պաշտոնական հաղորդագրության, «ցավով են ընդունվել, այսպես կոչված, Հայոց ցեղասպանության մասին պնդումների հետ կապված զարգացումները» և որոշվել է դրանց դեմ «փուլ առ փուլ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել»<sup>10</sup>: Պաշտոնաթող դիվանագետ Գյունդուզ Աքթանը, որը Թուրքիայում համարվում է Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի «միջազգային-իրավական» ուղղության «հոգևոր հայրը», ԱՄԽ-ի 2000թ. հոկտեմբերի 27-ի առաջին նիստի հաջորդ օրը հանդես եկավ հողվածով, որտեղ առաջին անգամ կոչ արեց

9 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008թ., Գիտական զեկուցումների ժողովածու, Ս., 2008, էջ 137:

10 Նույն տեղում, էջ 138:

Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարում հենվել միջազգային-իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի վրա: 2001թ. լույս տեսած Գյուլնուզ Աքթանի «Հայկական հարցը և միջազգային իրավունքը» հոդվածում փորձ է արվում «հիմնավորել», որ 1915թ. իրադարձությունները միջազգային իրավունքի տեսանկյունից ցեղասպանություն չեն, քանի որ դրանց նկատմամբ չի կարելի կիրառել ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի դրույթները<sup>11</sup>: Այլ խոսքով թուրք դիվանագետը փորձում է առաջ մղել ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի՝ հետադարձ ուժ չունենալու մասին տեսակետը:

Պետք է նշել, սակայն, որ այս հարցադրմանը պատշաճ ու արժանի հակահարված է տրվել միջազգային իրավունքի անվանի մասնագետ Յուրի Բարսեղովի կողմից: Ի պատասխան թուրք դիվանագետի հոդվածի՝ նա հրապարակել է մի ամբողջ աշխատություն<sup>12</sup>, որում ցույց է տվել Գյուլնուզ Աքթանի հարցադրումների սնանկությունը միջազգային իրավունքի տեսակետից:

Այդուհանդերձ, արդեն 2001թ. մայիսին Թուրքիայում ստեղծվեց հատուկ մարմին՝ «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ», որի նախագահությունը 2006թ. ի պաշտոնե ստանձնեց այն ժամանակվա արտաքին գործերի նախարար ու փոխվարչապետ **Աբդուլլա Գյուլը**<sup>13</sup>:

**Սա չափազանց հետաքրքրական իրողություն է, եթե հաշվի առնենք այն փաստը, որ Ա.Գյուլն այժմ Թուրքիայի նախագահն է և զբաղվում է հենց հայ-թուրքական հարաբերությունների «կարգավորմամբ»:**

Ժամանակին Ա.Գյուլը, ստանձնելով տվյալ կառույցի նախագահի պաշտոնը, հանդես է եկել մի շարք հայտարարություններով, որոնցում նշել է, որ «մանրակրկիտ» աշխատանք է կատարվել «Հայոց ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումները» միջազգային ատյաններ տեղափոխելու հնարավորությունների ուսումնասիրման ուղղությամբ, որ այդ գործընթացում ներգրավված են պաշտոնաթող դիվանագետներ, ինչպես նաև թուրք և օտարազգի վստահելի իրավագետներ և որ Թուրքիայի այս նոր մոտեցման որդեգրումը դրական է գնահատվում մի շարք պետությունների կողմից<sup>14</sup>:

Պետք է նշել, որ Թուրքիայի խորհրդարանում Ա.Գյուլի ունեցած այս բովանդակությամբ ելույթը Գյուլնուզ Աքթանը, որը հավանաբար նույնպես ընդգրկված էր հիշյալ կառույցի աշխատանքներում, որակել է որպես «չափազանց խիզախ»<sup>15</sup>:

2006թ. դեկտեմբերի 26-ին Ա.Գյուլի նախագահությամբ կայացած հիշյալ կառույցի հերթական նիստում քննարկվել է այս հարցին ընթացք տալու երեք տարբերակ. **առաջին**՝ դիմել Եվրոպայի մարդու իրավունքների դատարան՝

11 Տե՛ս Սաֆրասյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում..., էջ 139:

12 Տե՛ս Барсегов Ю. Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена “комиссии примирения” Гюндюз Актана), М., 2002.

13 Տե՛ս Սաֆրասյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում..., էջ 139-140:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 140:

15 Տե՛ս նույն տեղում:

Հայոց ցեղասպանության մասին Ֆրանսիայի խորհրդարանի հայտնի որոշումը բողոքարկելու նպատակով, **երկրորդ**՝ հարցը հանձնել Հաագայի արդարադատության առյուծկուն, **երրորդ**՝ դիմել Հաագայի միջազգային իրավաբան մշտական առյուծկուն<sup>16</sup>: Եվ ի վերջո, նախապատվությունը տրվել է երրորդ տարբերակին, սակայն մինչ այդ անհրաժեշտ է համարվել հարցը քննարկել բուրբ և օտարազգի իրավագետների հետ<sup>17</sup>:

Կարծում ենք՝ ներկայումս Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ընթացող գործընթացների խորապատկերի վրա Թուրքիան, հնարավոր է, որ առժամանակ կասեցրել է տվյալ մտադրության իրականացումը: Սակայն դա ամենևին չի կարող նշանակել, որ մենք նորից պետք է դիտորդի կեցվածք ընդունենք և սպասենք Թուրքիայի հաջորդ քայլերին: Ընդհակառակը, այս ուղղությամբ հարկավոր է որդեգրել մտածված, նախաձեռնող ու հետևողական քայլեր, այլ ոչ թե կրկին ուշացած կերպով արձագանքել Թուրքիայի կողմից ծրագրավորվող խարդավանքներին:

Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների հատուցմանը հասնելու գերխնդիրը քննարկելիս պետք նկատի ունենանք, որ գոյություն ունեն մի շարք բարդ ու խճճված հիմնահարցեր, որոնք անմիջականորեն կապ ունեն տվյալ հանցագործության հետևանքների վերացման հետ: Միայն դրանք հաջողությամբ հաղթահարելու պարագայում հնարավոր է շարժվել առաջ և հասնել հարցի վերջնական կարգավորմանը: Այդ հիմնահարցերը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի:

**Առաջինը** Թուրքիայի Հանրապետության՝ Հայոց ցեղասպանությունն իրականացրած Օսմանյան կայսրության իրավահաջորդը լինելու փաստի իրավական հիմնավորումն է և Օսմանյան կայսրության չգոյության պայմաններում տվյալ հանցագործության համար պատասխանատվության տեղափոխումը ժամանակակից Թուրքիայի վրա: Այս հիմնահարցը չափազանց կարևոր է, քանզի միայն ժամանակակից Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդը հանդիսանալու փաստի ապացուցումը կարող է հանգեցնել նրան պատասխանատվության ենթարկելուն՝ իր նախորդի կատարած հանցագործության համար:

Այսպես՝ Օսմանյան կայսրության փլուզումից և որպես միջազգային իրավունքի սուբյեկտի անհետացումից հետո, նրա նախկին տարածքներում առաջացել են Թուրքիայի հետ կապ չունեցող մի շարք նոր պետություններ, ինչպիսիք են Իրաքը, Սիրիան, Հորդանանը, Իսրայելը, Լիբանանը և այլն: Սակայն Օսմանյան կայսրության փլուզումից հետո արդյո՞ք նոր պետություն է Թուրքիան ինքը, թե՞ շարունակում է Օսմանյան կայսրության իրավահաջորդությունը:

Ինչպես հայտնի է, միջազգային իրավահաջորդությունը որևէ պետության իրավունքների և պարտականությունների փոխանցումն է մեկ այլ պետության, ինչը նշանակում է արդեն գոյություն չունեցող պետության շարունակություն: Միջազգային իրավունքի տեսաբանները առանձնացնում են միջազգային իրավահաջորդության երկու տեսակ՝ **ամբողջական և մասնակի**, որոնք

16 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում..., էջ 141:  
17 Տե՛ս նույն տեղում:

հատակեցումն են իրավահաջորդության չափերի խնդիրը, այսինքն՝ այն հարցը, թե իրավահաջորդ պետությունը ի՞նչ ծավալով պետք է ստանձնի նախորդի իրավունքներն ու պարտականությունները: Իրավահաջորդության հարցի առաջացումը կապված է պետությունների տրոհման, նրանց տարածքների բռնակցման կամ մի քանի պետությունների միավորման ու դաշնակցային պետության ստեղծման հետ: Եվ պետք է հստակեցվի, թե նշված գործընթացներում կա՞րողյոք որևէ պետություն, որը շարունակում է նախորդ պետության իրավահաջորդությունը, թե՞ ոչ<sup>18</sup>:

Միջազգային իրավունքի տեսության համաձայն՝ իրավահաջորդության հստակեցումը կապված է այն հարցի հետ, թե նոր առաջացած պետությունը արդյո՞ք պահպանում է նախորդ պետության գլխավոր հատկանիշերը՝ պատմական կապը, հիմնական բնակչությունը, նրա ազգային ծագումը, լեզուն, կառավարման եղանակը և այլ բնութագրիչներ: Եթե պատասխանը դրական է, ուրեմն այդ դեպքում գործ ունենք ոչ թե նոր առաջացած պետության, այլ նախորդ պետության իրավահաջորդի հետ<sup>19</sup>:

Ելնելով այս դրույթներից, ակնհայտ է դառնում, որ թուրքերը իշխել են Օսմանյան կայսրության ժամանակ և այդ տիրապետումը փոխանցվել է նաև ժամանակակից Թուրքիային, ընդ որում, այդ նույն ժողովուրդը պահպանել է Օսմանյան կայսրության ժամանակ ունեցած իր ավանդույթները և լեզուն: Ավելին, ինչպես հայտնի է, երիտթուրքերից շատերը հետագայում դարձան քենալական շարժման ղեկավարներ, և անկախ կառավարման եղանակից, հանրապետական կարգերի պարագայում, ինչպես և Օսմանյան կայսրության ժամանակ, շարունակվեց թուրք ժողովրդի իշխանությունը տվյալ տարածքի վրա: **Ուստի ակնհայտ է, որ ի դեմս Թուրքիայի՝ մենք գործ ունենք Օսմանյան կայսրության իրավահաջորդի հետ:**

Սակայն Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդության հարցը չի սահմանափակվում լոկ միջազգային իրավունքի տեսական հիմնավորումներով: Գործնականում Թուրքիայի իրավահաջորդության հարցը առաջադրվել է 1923թ. Լոզանի կոնֆերանսի ժամանակ, երբ քննարկվում էր նախկին Օսմանյան կայսրության պարտքի հարցը: Խնդիր էր դրված պարզել, թե այդ պետության չգոյության պայմաններում ո՞վ պետք է ստանձնի պարտքի վճարման պարտավորությունը: Թուրքական կողմը իրեն բնորոշ եղանակով հայտարարեց, որ Թուրքիան ոչ մի կապ չունի Օսմանյան կայսրության հետ, որն արդեն գոյություն չունի: Ըստ թուրքերի տրամաբանության՝ համաձայն Լոզանի պայմանագրի 5-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի, Թուրքիան ստեղծվել է ի թիվս Օսմանյան կայսրության անդամահատումից հետո առաջացած Սիրիայի, Լիբանանի և Իրաքի: Ուստի, եթե կա Օսմանյան կայսրության պարտքերի վերադարձի խնդիր, ապա այն պետք է բաշխվի նոր առաջացած բոլոր պետությունների վրա<sup>20</sup>:

Բայց, չնայած թուրքական փաստարկներին, միջազգային իրավարար Բորելը վճռեց, որ ըստ միջազգային իրավունքի՝ Թուրքիան է հանդիսանում Օսմանյան կայսրության իրավահաջորդը, ուստի հենց նա էլ պետք է վճարի

18 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրոս 1976, էջ 192:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 193:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 195:

Օսմանյան կայսրության պարտքը<sup>21</sup>: Այս վճռի հիման վրա Թուրքիան ստանձնեց Օսմանյան կայսրության պարտքի վճարման պարտավորությունը: Ու չնայած հսկայական զիջումներին, Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության պարտքը կարողացավ փակել միայն 1944թ. հունիսին<sup>22</sup>: Այն փաստը, որ Թուրքիան ընդհուպ 1944թ. վճարել է Լոզանի պայմանագրով սահմանված՝ Օսմանյան կայսրության պարտքը, վերջնականապես հաստատում է Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդը լինելու հանգամանքը:

Այսպիսով, եթե Թուրքիան ճանաչվել է որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդը և որպես այդպիսին կատարել է իր նախորդի պարտավորությունները՝ կապված պետական պարտքի մարման հետ, ապա նա պատասխանատվություն է կրում նաև վերջինիս կատարած հանցագործությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության համար:

**Երկրորդ**, իրավահաջորդության խնդրի հետ սերտորեն առնչվում է նաև այն հարցը, թե պետության կառավարման ձևի (վարչակարգի) կամ տարածքի փոփոխությունը միջազգային իրավունքի տեսակետից կարո՞ղ է արդյոք ազդել ցեղասպանության իրականացման համար տվյալ պետությանը պատասխանատվության կանչելու գործընթացի վրա: Իսկապես, պետության կառավարման ձևի կամ պետության տարածքի փոփոխությունն իբրև փաստարկներ նույնպես կարող են բերվել՝ Թուրքիայի իրավահաջորդությունը ժխտելու համար: Սակայն պետք է նշել, որ միջազգային իրավունքում կան բավարար ապացույցներ, որոնք հաստատում են, որ տվյալ հանգամանքները որևէ կերպ չեն կարող ազդել իրավահաջորդության հարցի վրա, եթե անգամ վարչաձևի փոփոխությունը հեղափոխության հետևանք է<sup>23</sup>:

Սա, թերևս, բացատրվում է նաև նրանով, որ միջազգային որոշակի պարտավորություններ ստանձնած կամ միջազգային հանցագործություն կատարած պետությունը, իր պարտավորությունների կատարումից կամ պատասխանատվությունից խուսափելու համար, հնարավորություն ունի դիմելու ծրագրավորված իմիտացիայի (նմանակման): Արդյունքում նա կարող է ձևականորեն վերաբաժանել իր տարածքը կամ էլ հեղափոխություն նմանակելու միջոցով փոխել կառավարման ձևը և դրանց հիման վրա պնդել, թե իբր՝ տվյալ պարտավորությունները ստանձնել կամ հանցագործությունը կատարվել է այլ պետություն կամ վարչակարգ: Պետք է նշել, որ ի դեմս քեմալական շարժման՝ մենք գործ ունենք հենց նման երևույթի հետ, քանզի հայտնի է, որ ըստ էության նախկին երիտթուրքերն անցան քեմալական շարժման գլուխ, իսկ հետո էլ ստանձնեցին հանրապետական Թուրքիայի կառավարման դեկր:

**Երրորդ**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իմաստով կարևոր է նաև Հայաստանի երրորդ Հանրապետության կողմից ժամանակակից Թուրքիային միջազգային-իրավական պահանջներ ներկայացնելու կամ միջազգային դատական ատյաններում որպես հայցվոր կողմ հանդես գալու իրավունքի հարցի հստակեցումը: Տեսականորեն՝ Հայոց ցեղասպանության հետ կապված հիմնահարցերի լուծումը պետք է ստանձնի հայ ժո-

21 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, էջ 195:  
22 Տե՛ս Դադայան Խ. Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», (գիտագործնական միջազգային գիտաժողով), էջ 179:  
23 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, էջ 192:

ղովրդի այն հատվածը, որն անմիջականորեն տուժել է երիտթուրքերի կողմից իրականացված ցեղասպանության քաղաքականությունից, ինչի արդյունքում էլ սփռվել է աշխարհով մեկ՝ ձևավորելով հայկական Սփյուռքը: Այլ խոսքով՝ հենց անմիջական տուժողը պետք է ստանձնի իր իրավունքների ու շահերի պաշտպանությունը և պատասխանատվության կանչելով հանցագործ պետությանը՝ հասնի նյութական (այդ թվում՝ տարածքային) և բարոյական վնասների հատուցմանը:

Սակայն, համաձայն գործող միջազգային իրավական համակարգի ու գոյություն ունեցող նորմերի՝ միջազգային իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում միայն միջազգայնորեն ճանաչված պետությունները, որոնք օժտված են սուվերենությամբ<sup>24</sup>: Հասկանալի է, որ հայկական Սփյուռքը օժտված չէ սուվերենությամբ (ինքնիշխանությամբ), ինչից ելնելով էլ չի կարող դիտվել իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ և հետևաբար որպես պահանջատեր՝ չի կարող հանդես գալ որևէ միջազգային ատյանում:

Մյուս կողմից էլ պետք է նշել, որ այսօր Հայաստանում բնակվող հայության ճնշող մեծամասնությունը նույնպես Հայոց ցեղասպանության զոհերի և վերապրածների ժառանգներ են: Ուստի եթե անգամ Սփյուռքը ունենար իրավական հնարավորություն՝ ներկայացնելու ցեղասպանության հետևանքով տուժած հայ ժողովրդի շահերն ու իրավունքները, տրամաբանական չէր լինի այդ գործընթացից դուրս թողնել Հայաստանում բնակվող ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներին: Բացի այդ, հարկ է մեկընդմիջտ ձերբազատվել մեզանում առկա այն սխալ ու վնասակար մտայնությունից, որ Հայոց ցեղասպանության պահանջատիրությունը միայն Սփյուռքի գործն է:

Այս իմաստով ծագում է նաև իր՝ Հայաստանի երրորդ Հանրապետության իրավահաջորդության հարցը՝ պարզելու համար, թե ի՞նչ առնչություն ունի նա հայ ժողովրդի ցեղասպանությունից տուժած հատվածի շահերի ու իրավունքների հետ: Կարծում ենք՝ ՀՀ իրավահաջորդության հարցը համեմատաբար կարգավորված խնդիր է, քանզի Հայաստանի առաջին Հանրապետությունը Երևանի 1920թ. դեկտեմբերի 2-ի պայմանագրի դրույթներով իշխանությունը բուլղարիայից հեղկոմին փոխանցելու ժամանակ վերջինիս է փոխանցել նաև իր իրավունքներն ու պարտավորությունները: Այսինքն՝ Խորհրդային Հայաստանի իշխանություններն, ըստ էության, ստանձնել են Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդությունը<sup>25</sup>:

Այնուհետև Խորհրդային Հայաստանը, դառնալով սկզբում՝ Անդրֆեդերացիայի, իսկ հետո էլ՝ Խորհրդային Միության մասը, իր իրավահաջորդությունը փաստորեն փոխանցել է ԽՍՀՄ-ին<sup>26</sup>: Թերևս հենց սրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Խորհրդային Միությունը իրեն իրավունք վերապահեց հանդես գալու Խորհրդային Հայաստանի անունից և տարածքային հարց բարձրացնելու Թուրքիայի առջև: Այս փաստը նույնպես հստակ ցույց է տալիս, որ ԽՍՀՄ-ը ժառանգել էր Խորհրդային Հայաստանի իրավահաջորդությունը, հակառակ պարագայում տվյալ պահին Թուրքիան կամ ՍԱԿ-ը կվիճարկեին Խորհրդային Հայաստանի

24 Տե՛ս նույն տեղում, էջ 197:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 200:

26 Տե՛ս նույն տեղում:



անունից ԽՍՀՄ-ի հանդես գալու իրավունքը:

Այնուհետև՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, ներկայիս Հայաստանի Հանրապետությունը փաստորեն ԽՍՀՄ-ից ժառանգեց Խորհրդային Հայաստանի իրավահաջորդությունը: Այսպիսով, դժվար չէ նկատել, որ Հայաստանի երրորդ Հանրապետությունը փուլային տարբերակով հանդիսանում է Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդը:

Սակայն ըստ միջազգային իրավունքի՝ Հայաստանի Հանրապետությունը կարող է ներկայացնել ու պաշտպանել միայն Հայոց ցեղասպանության այն գոհերի ու վերապրածների ժառանգների շահերն ու իրավունքները, որոնք հանդիսանում են իր քաղաքացիները: Ինչ վերաբերվում է արևմտահայերի շահերի ներկայացմանն ու պաշտպանությանը, ապա այս իմաստով պետք է նշել, որ Արևմտահայերի Երկրորդ համագումարը դեռևս 1919թ. օժտել է Հայաստանի առաջին Հանրապետությանը նման իրավունքով: 1919թ փետրվարի 12-ին համագումարի ընդունած «Քաղաքական բանաձևի» 5-րդ կետի համաձայն՝ արևմտահայերի Գործադիր մարմինը Արարատյան Հանրապետության կառավարության և պառլամենտի հետ միասին պետք է ձեռնարկեր իրական քայլեր Միացյալ Ազատ Հայաստանի հռչակման ուղղությամբ<sup>27</sup>: Այս ձևակերպումով փաստորեն արևմտահայերի լիազոր մարմինը լիազորում էր Հայաստանի առաջին Հանրապետությանը հանդես գալ նաև իր անունից՝ իբրև պահանջատեր կողմ, քանզի Միացյալ Ազատ Հայաստանի հռչակումն անպայմանորեն ենթադրում էր Հայոց պահանջատիրությունը: Սակայն միևնույն ժամանակ, օժտելով հանդերձ Հայաստանին նման իրավունքով, արևմտահայերի համագումարն ընդգծում էր միասին ու համատեղ աշխատելու կարևորագույն հանգամանքը: Այս դրույթը խիստ արդիական է նաև այսօր, քանզի այն ենթադրում է թե՛ Հայաստանի, և թե՛ Սփյուռքի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գործում: Ելնելով ընդհանուր ազգային շահերից, Սփյուռքը պետք է գիտակցի, որ ցեղասպանության դատապարտման և այդ հանցագործության հետևանքների վերացման գործում ինքնուրույն չի կարող հասնել ավելի լուրջ հաջողությունների, քանզի օժտված չէ սուվերենությամբ, չի հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ, հետևաբար՝ չի կարող լիարժեք և արդյունավետ կերպով պաշտպանել Հայոց պահանջատիրությունը միջազգային դատական ատյաններում: Մյուս կողմից՝ Հայաստանը այս գործում անպայման պետք է ներգրավի Սփյուռքի համապատասխան կառույցներին ու հաշվի առնի թե՛ նրանց փորձն ու գիտելիքները և թե՛ կարծիքներն ու մոտեցումները: Այս իմաստով խիստ կարևոր է Սփյուռքի ու Հայաստանի միջև կատարել ճիշտ դերաբաշխում Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացում: Նրանցից յուրաքանչյուրի հնարավորություններն անհրաժեշտ է գործի դնել ավելի արդյունավետ ու նպատակային աշխատելու համար: Կարծում ենք, որ սա չափազանց կարևոր հարց է Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համազգային ռազմավարության ու մարտավարության մշակման հեռանկարի առումով:

**Չորրորդ,** միջազգային իրավունքի տեսակետից խիստ կարևոր է նաև

27 Տե՛ս Մելիքեան Վ., Արևմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Եր., 2007, էջ 10:

Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կիրառելիությունը, այսինքն՝ Հայոց ցեղասպանության վաղեմության ժամկետի և կոնվենցիայի հետադարձ ուժի հետ կապված հարցերը:

Քանզի թուրք «մասնագետները» շարունակաբար պնդում են, որ 1948թ. ընդունված ՄԱԿ-ի կոնվենցիան չի կարող հետադարձ ուժ ունենալ և վերաբերել 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցած իրադարձություններին<sup>28</sup>: Բայց որքան էլ պարադոքսալ է, մման ձևակերպմամբ թուրք հեղինակները անուղակիորեն ընդունում են, որ 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ իրականացվել է ցեղասպանություն: Փաստորեն թուրք «մասնագետներին» բավականին անհանգստացնում է այն հարցը, որ կոնվենցիայի հետադարձ ուժ ունենալու պայմաններում դա կրերի թուրքական պետության պատասխանատվությանը: Պատճառն այն է, որ իրենք էլ փայլուն կերպով գիտեն, որ այն, ինչ իրականացվել է հայերի նկատմամբ 20-րդ դարասկզբին, լիովին համապատասխանում է ցեղասպանության հանցագործության չափորոշիչներին:

ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի հետադարձ ուժ ունենալը հիմնավորվել է հայ և օտարազգի հեղինակավոր գիտնականների կողմից<sup>29</sup>, ուստի հարկ չենք համարում մանրամասն կանգ առնել այդ հարցի վրա:

«Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948թ. կոնվենցիայի ընդունումից 20 տարի անց՝ 1968թ. նոյեմբերի 26-ին, ՄԱԿ-ը ընդունել է նաև մեկ այլ կոնվենցիա՝ «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին»: Նշված կոնվենցիայում պայմանավորվող կողմերը ընդգծում են, որ «պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար պատասխանատվության կանչելու կամ պատժելու վերաբերյալ առկա որևէ հռչակագրում, ակտում կամ կոնվենցիայում նախատեսված չէ վաղեմության մասին դրույթ»<sup>30</sup>: Ավելին, նրանում ընդգծվում է, որ տվյալ կոնվենցիայով միջազգային իրավունքում համընդհանուր կիրառության մեջ է մտնում «այն սկզբունքը, համաձայն որի պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար գոյություն չունի վաղեմության ժամկետ»<sup>31</sup>:

«Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիայի հենց առաջին հոդվածում հստակորեն նշված է այն պարտադիր դրույթը, որ «անկախ կատարման ժամկետից (ընդգծումը մերն է.-Ա.Մ.), պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ որևէ վաղեմության ժամկետներ

28 Տե՛ս Барсегов Ю. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 51.

29 Թորիկյան, Բարսեղյան, դե Զայաս և ուրիշներ: «Վեմ»-ի ներկա համարում տես նաև Վ. Վարդանյանի հոդվածը:

30 Տե՛ս Конвенция ООН 26 ноября 1968 года “О неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества”, Преамбула, նշվ. աշխ., с. 786.

31 Տե՛ս նույն տեղում, статья I.

չեն կիրառվում»<sup>32</sup>:

Այսպիսով, ընդգծելով, որ վերը նշված հանցագործությունների նկատմամբ նախկինում որևէ միջազգային փաստաթղթում գոյություն չի ունեցել վաղեմության ժամկետի մասին դրույթ, ինչպես նաև հաշվի առնելով այդ հանցագործությունների՝ միջազգային իրավունքի տեսակետից առանձնապես ծանր լինելու հանգամանքը, ՄԱԿ-ը սույն կոնվենցիայով միջազգային իրավունքում շրջանառության մեջ է դրել պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու սկզբունքը:

Կոնվենցիան նաև պարզաբանումներ է տալիս այն հարցի հետ կապված, թե ինչ է հասկացվում «պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ կատարված հանցագործություններ» անվան տակ: Համաձայն կոնվենցիայի երկրորդ հոդվածի՝ «մարդկության դեմ կատարված հանցագործություն է համարվում նաև ցեղասպանության հանցագործությունը, որը սահմանվել է ՄԱԿ-ի 1948թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով, նույնիսկ եթե այդ գործողությունները այն երկրում, որտեղ կատարվել են, չեն համարվում ներքին օրենսդրության խախտում»<sup>33</sup>:

Եթե հաշվի չառնենք 1919թ. նախկին երիտթուրքական կառավարության անդամների դատավարության պատրանքը թուրքական ռազմական տրիբունալում, ապա կարելի է պնդել, որ կոնվենցիայի սույն հոդվածը անմիջականորեն և այն էլ՝ կրկնակի հիմքերով վերաբերում է հենց Թուրքիային: **Պատճառն այն է, որ ցեղասպանության նկատմամբ վաղեմության ժամկետը չկիրառելու դրույթի առկայության հետ միասին Թուրքիան նաև մարդկության դեմ հանցագործություն կատարած Օսմանյան կայսրության իրավաժառանգորդն է:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի 1968թ. կոնվենցիան ուղղակիորեն հղում է կատարում 1948թ. կոնվենցիայի վրա, միաժամանակ կարելի է արձանագրել, որ **առաջինը** փաստորեն **երկրորդի** լրացումն ու շարունակությունն է և պետք է կարծել, որ այս նոր կոնվենցիայով ՄԱԿ-ը, ըստ ամենայնի, որոշել է վերջնականապես վերջակետ դնել 1948թ. կոնվենցիայի կիրառման և նրա հետադարձ ուժ ունենալու հարցերում նկատվող տարիմաստ մեկնաբանություններին:

**Հինգերորդ,** անհրաժեշտ է այն փաստի հիմնավորումը, որ Հայոց ցեղասպանությունը՝ անկախ ավելի ուշ կիրառված «գենոցիդ» հասկացությունից, այդ ոճրագործության կատարման պահին ևս համարվել է նույնբովանդակ, ուրեմն նաև՝ նույն պատիժը ենթադրող հանցագործություն, որի համար պատասխանատվություն է սահմանված եղել դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գործող միջազգային իրավական նորմերով: Սա չափազանց կարևոր խնդիր է, քանզի, եթե հնարավոր է հիմնավորել, որ հայերի զանգվածային սպանությունները տվյալ հանցագործության կատարման պահին միջազգային իրավունքի կողմից համարվել են հանցագործություն, ապա դրանից միանշանակորեն բխում է, որ անկախ հանցագործության անվանումից

32 Տե՛ս նույն տեղում:  
33 Տե՛ս Կոնվենցիա ՕՈՆ 26 նոյաբր 1968 թ. «Օ նեփրիմենիմոստի սրոկա ճաճնոստի կ Վոեննիմ թրեստլենիան և թրեստլենիան թրոտիվ շեճոճեշտա՛», ստաճիա 1, քոնքտ b, նշվ. աշխ., ս. 787.

և նրա կատարման ժամանակից, միջազգային իրավունքը, որը խարսխվում է նախադեպերի վրա, նախկինում կատարված իդենտիկ (նույնական) հանցագործությունը նույնպես պետք է դիտարկի որպես այդպիսին:

Այս կապակցությամբ պետք է հիշել, որ 1860թ. Օսմանյան կայսրության տարածքում, մասնավորապես Լիբանանում ու Սիրիայում մահմեդականները զանգվածաբար կոտորեցին քրիստոնյա մարոնիտներին, մեծ տերությունները միջամտեցին այդ գործին և փաստորեն խառնվեցին Օսմանյան կայսրության ներքին գործերին: Միջամտության արդյունքը եղավ այն, որ 1860թ. օգոստոսի 3-ին ստորագրվեց Փարիզի արձանագրությունը և 1861թ. հունիսի 9-ին կայացվեց որոշում, որը նախատեսեց Լիբանանի համար քրիստոնյա գլխավոր-նահանգապետ<sup>34</sup>: Այսպիսով, Օսմանյան կայսրությունում քրիստոնյա մարոնիտների պաշտպանության ընթացքում գործ ունենք միջազգային իրավունքում և հարաբերություններում այսպես կոչված՝ մարդասիրական միջամտության (հումանիտար ինտերվենցիայի) սկզբունքի կիրառման հետ, համաձայն որի՝ որևէ պետության տարածքում փոքրամասնությունների շահերի և իրավունքների ոտնահարման դեպքում միջազգային հանրությունը կարող է վերջիններիս պաշտպանելու նպատակով միջամտել տվյալ պետության ներքին գործերին:

Ի դեպ, այս հանգամանքը որպես նախադեպ հիշատակում էր նաև Ռուսաստանի արտգործնախարար Ս.Գ. Սազոնովը, երբ 1915թ. մայիսի 18-ին Փարիզում և Լոնդոնում ռուս դեսպաններին հղած հեռագրում, մտահոգվելով հայերի զանգվածային կոտորածներով, առաջարկում էր Անտանտի տերություններին ընդունել համատեղ հռչակագիր, որը կդատապարտեր կոտորածները Օսմանյան կայսրության տարածքում: Նա դեսպաններին հուշում էր, որ դաշնակիցներին հղված դիմումի մեջ կարելի է հիշեցնել 1860թ. Սիրիայում տեղի ունեցած կոտորածներից հետո Եվրոպայի կողմից ձեռնարկված պատժիչ միջոցների մասին<sup>35</sup>:

1860թ. Լիբանանում ու Սիրիայում տեղի ունեցած կոտորածներից ավելի ուշ՝ 1878 թվականին, այս դրույթը ամրագրվել է նաև Բեռլինի պայմանագրում, որտեղ հատուկ հոդվածով քննարկվում էր Օսմանյան կայսրության հայ բնակչության շահերի և իրավունքների պաշտպանության հարցը: Փաստորեն, մարդասիրական միջամտությունը արդեն երկրորդ անգամ էր կիրառվում Օսմանյան կայսրության հետ կապված, ինչը վկայում էր այն մասին, որ այդ պետությունը հետևողականորեն խախտում է իր տարածքում ապրող փոքրամասնությունների իրավունքները, ինչպես նաև այդ հարցում իր ստանձնած միջազգային պարտավորությունները՝ հանգեցնելով մեծ տերությունների օրինական միջամտությանը իր ներքին գործերին:

Ինչպես հայտնի է, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով Օսմանյան կայսրության վրա պարտավորություն է դրվել բարենորոգումներ իրականացնել հայաբնակ տարածքներում և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից

34 Ավելի մանրամասն տե՛ս Զակոբյան Զ., Զայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը., էջ 134:

35 Տե՛ս Զայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբ., եր., 1972, էջ 369: Տես նաև՝ Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916. Сост. Г.А. Абрамян, Т.Г. Севан-Хачатрян, Ер., 1995, с. 15.

ու չերքեզներից<sup>36</sup>: Կարևոր է նշել նաև, որ այդ բարենորոգումների գործընթացը դրվում էր տերությունների հսկողության տակ, այսինքն՝ դրանք այլևս հայեցողական պահանջներ չէին, և Թուրքիան պետք է հաշվետու լիներ տերությունների առջև իր կատարած քայլերի համար: Այսպիսով, հայկական բարենորոգումները այլևս միջազգային իրավունքի հարց էին, այլ ոչ թե կայսրության ներքին գործ: Փաստորեն, մեծ տերությունները, իրենց վրա վերցնելով բարենորոգումների իրականացման վերահսկողության գործառույթը, իրենց բաժին պարտավորությունն էին ստանձնում այդ հարցում, այլ բան է, որ նրանց կարելի է մեղադրել պատշաճ վերահսկողություն չիրականացնելու և Օսմանյան կայսրության վրա համապատասխան ճնշում չգործադրելու համար:

Օսմանյան կայսրության նկատմամբ մարդասիրական միջամտություն իրականացնելու հարցում մեծ տերությունների անհետևողականությունը մեծապես պայմանավորված էր նրանց շահերի միջև նկատվող հակասություններով: Տվյալ պայմաններում գործընթացը հանգեցնում էր ոչ թե մարդասիրական միջամտությանը, այսինքն՝ ազգային փոքրամասնությունների շահերի ու իրավունքների պաշտպանությանը, այլ ընդհակառակը՝ ավելի էր սանձազերծում Օսմանյան կայսրության կառավարող վարչակարգին: Վերջինս ոչ միայն չէր կատարում ստանձնած պարտավորությունները, այլև ավելի դաժանորեն էր կոտորում այն փոքրամասնությանը, որին պաշտպանելու համար մեծ տերությունները նախաձեռնել էին այդ «հումանիտար ինտերվենցիան»:

Ասվածի վառ ասպացույցը Աբդուլ Համիդի կողմից 1894-1896 թթ. իրականացված արևմտահայերի զանգվածային կոտորածներն են: Վստահաբար կարելի է պնդել, որ դրանք տեղի չէին ունենա, եթե մեծ տերությունները միահամուռ կերպով սուլթանից պահանջեին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների կատարումը: Ստեղծված իրավիճակում մեծ տերություններից միայն երեքը՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը բավարարվեցին 1895թ. մայիսին բարենորոգումների նոր փաթեթ ներկայացնելով, որում ընդամենը համեստ հիշատակություն կար Բեռլինի պայմանագրի համապատասխան հոդվածի մասին<sup>37</sup>: Հուշագրի՝ իբրև միջազգային փաստաթղթի իրավական կարգավիճակը, անշուշտ, չափազանց ցածր է և չի կրում պարտադիր բնույթ: Սինչդեռ, ելնելով Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածից, տերությունները կարող էին ավելի կոշտ միջոցների դիմել Օսմանյան կայսրության նկատմամբ, քանզի ակնհայտ էր, որ վերջինս չէր կատարել Բեռլինի պայմանագրով իր վրա դրված պարտավորությունները: Ավելին, Բ.Դուռը պետք է հաշվետու լիներ տերությունների առջև կատարվող բարենորոգումների համար, ինչը նույնպես չէր արել:

Դա պայմանավորված էր նրանով, որ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, որոնք ստորագրել էին Բեռլինի պայմանագիրը, չմիացան այս գործընթացին, քանզի կատարվում էին նոր աշխարհաքաղաքական վերադասավորումներ, ստեղծվում էին նոր ռազմաքաղաքական դաշինքներ: Այս հուշագիրը դարձավ յուրահատուկ փորձաքար, որով բաժանվեցին մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերը: Չմիանալով այս գործընթացին՝ նշված տերությունները, ի հակադրություն քիչ անց ձևավորված Անտանտի,

36 Տե՛ս Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 128:  
 37 Տե՛ս Հայաստանը... փաստաթղթերում, էջ 131:

ամրապնդեցին Օսմանյան կայսրության դիրքերը և թուլացրին համընդհանուր ճնշումը Բ. Դռան վրա: Եվ անգամ այս պայմաններում շահագրգիռ կողմերը՝ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան լիարժեք իրավունք ունեին հրավիրել Հայկական հարցին մվիրված հատուկ խորհրդատուով և հաշիվ պահանջել Օսմանյան կայսրությունից՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները չկատարելու համար: Բայց զբաղված լինելով սեփական շահերի հետապնդումով, նրանք չցանկացան իրենց ջանքերն ու ժամանակը տրամադրել այդ գործին:

Ավելի ուշ՝ Հաագայում տեղի ունեցած 1899թ. խաղաղության առաջին կոնֆերանսում ընդունված «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին» **առաջին կոնվենցիայում** սահմանվել են «մարդկության» և «մարդկության օրենքների» սկզբունքները, որոնցով դատապարտվում են խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններն ու կոտորածները<sup>38</sup>: Ավելին, 1907թ. կայացած Հաագայի երկրորդ կոնֆերանսում ընդունված **չորրորդ կոնվենցիայի** հավելվածի երրորդ կետում ամրագրված էր, որ «պատերազմող կողմը պատասխանատու է իր զինված ուժերի կազմում գտնվող անձանց բոլոր գործողությունների համար»<sup>39</sup>:

Թերևս հենց այս դրույթների վրա հենվելով, արդեն Հայոց ցեղասպանության ընթացքում՝ 1915թ մայիսի 24-ին Անտանտի տերությունները ընդունեցին համատեղ հայտարարություն, որով դատապարտվում էին Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության զանգվածային սպանությունները կայսրության ողջ տարածքում<sup>40</sup>: Համատեղ հռչակագրում հստակ բնորոշվում էր թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի զանգվածային կոտորածներին՝ ոչ միայն «թողտվության», այլև «ուղղակի օժանդակության» ձևով: Սկզբունքային նշանակություն ունի այն փաստի արձանագրումը, որ կատարվում են նոր հանցագործություններ, դրանով իսկ **առաջին**՝ նշվում է, որ հայերի զանգվածային ոչնչացման նախկին գործողությունները նույնպես եղել են հանցագործություններ և **երկրորդ**՝ ընդգծվում է հայերի նկատմամբ կատարված նոր հանցագործությունների կապը նախկինների հետ: Միջազգային իրավունքի տեսանկյունից այս հայտարարությունը նշանակալից է նրանով, որ Հայոց ցեղասպանությունը որակելով որպես «**մարդկության և քաղաքակրթության դեմ**» ուղղված հանցագործություն, ինչը բովանդակային առումով նույնական է հետագայում ընդունված «գենոցիդ» հասկացությանը, տվյալ միջազգային հանցագործության համար անձնական քրեական պատասխանատվությունը դնում էր թուրքական կառավարության և նրա տեղական ներկայացուցիչների, այսինքն՝ բոլոր անդամների վրա: Սրանով իսկ հայտարարությունը միջազգային մասշտաբով սկիզբ դրեց ֆիզիկական անձանց անձնական պատասխանատվությանը, ընդ որում, այն բացահայտ և ոչ երկիմաստորեն մերժում էր «պետական գործողության» ուսմունքին հղում կատարելու

38 Տե՛ս Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Եր., 2002, էջ 77:

39 Տե՛ս Գովհաննիսյան Վ., Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», գիտական զեկուցումների ժողովածու, էջ 20

40 Տե՛ս Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1878-1917, М.-Л. 1931-1940, серия III, т. 7, ч. 2, стр.252.

հնարավորությունը, որի համաձայն պետական մարմինները վերագրվում են պետությանը, ինչը բացառում է ֆիզիկական անձանց անձնական պատասխանատվությունը, որոնք հանդիսանում են այդ գործողություններն իրականացնողները<sup>41</sup>:

Համաձայն հայտարարության՝ Հայոց ցեղասպանության մեջ մեղավոր անձանց պաշտոնական դրությունը, անկախ այն բանից, թե նրանք հանդիսանում են կառավարության անդամներ, թե կառավարության ներկայացուցիչները՝ տեղերում, չի կարող դիտարկվել որպես արդարացուցիչ հանգամանք պատիժը մեղմացնելու համար: Հայոց ցեղասպանության այսպիսի որակումն իր հետ բերում է միջազգային հանրության և առաջին հերթին այն պետությունների կողմից (որոնք ստորագրել են հայտարարության տակ կամ ընդունել են նրա մեջ առկա գնահատականը) պատմական արդարության ճանաչումը, որը հնարավոր է դարձնում այդ հանցագործության հետևանքների ավելի ամբողջական վերացումը, իրավունքի և ճշմարտության վերականգնումը<sup>42</sup>:

Այսպիսով, 1915թ. մայիսի 24-ի հայտարարությունը միջազգային իրավունքի տեսակետից հստակ գնահատական էր Օսմանյան կայսրությունում կատարվող հայերի զանգվածային կոտորածներին և այս փաստաթղթի հրապարակումն արդեն՝ բուն կոտորածների ընթացքում, ևս մեկ վառ ապացույց է այն բանի, որ հայերի հետ կատարվածը համարվել է **հանցագործություն՝ համաձայն տվյալ պահին գործող միջազգային իրավական նորմերի**:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կնքվեցին Վերսալի, սպա Սևրի հաշտության պայմանագրերը՝ համապատասխանաբար Գերմանիայի ու Թուրքիայի հետ, և դրանցում հստակորեն նշված էր, որ պետք է ստեղծվեն միջազգային դատական ատյաններ պատերազմական հանցագործներին դատելու համար<sup>43</sup>: Թերևս, սրանից վախենալով էր, որ Թուրքիան հապճեպ ձեռնարկեց երիտթուրքերի դատավարությունը՝ հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը բարդելով միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու նրա առաջնորդների վրա ու փորձելով խուսափել թուրքական պետության պատասխանատվությունից, ինչը միանշանակ կարող էր ծագել միջազգային ատյանում մնան դատավարություն սկսելու պարագայում:

Այսպիսով, ցեղասպանության հանցագործությանը տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն» որակումը, որն առկա է 1899թ. Հաագայի առաջին կոնվենցիայում և 1915թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության մեջ, ոչ պատահականորեն, այլ օրինաչափորեն արտացոլվեց նաև ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» (1948թ.) ու «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968թ.) կոնվենցիաներում:

**Ուրեմն՝ հայերի զանգվածային սպանություններն անկախ «գենոցիդ» եզրույթի կիրառումից, համարվել են հանցագործություն՝ համաձայն մինչև**

41 St'u Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М. Нерсисяна, Ер., 1983, с. 280.  
42 St'u Барсегов Ю. Геноцид армян - преступление против человечества, с. 26.  
43 St'u Հովհաննիսյան Վ., նշվ. հոդվ., էջ 20:

**Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության ընթացքում և դրանից հետո գործող միջազգային իրավունքի նորմերի: Ուստի ներկայումս գործող միջազգային իրավական նորմերը թույլ են տալիս հենվել հենց ցեղասպանության կատարման պահին գործող նորմերի վրա և համապատասխան գնահատական տալ 20-րդ դարում կատարված հանցագործությանը:**

Նշված հիմնախնդիրների հստակեցումից հետո ծագում է նաև Հայոց ցեղասպանության իրագործման համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային պատասխանատվության կանչելու հնարավոր ձևերի ու միջոցների հարցը: Ինչ վերաբերում է արդի միջազգային իրավունքին և այն հնարավորություններին, որոնք կարելի է օգտագործել Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համար, պետք է նշել, որ նրանցում կան որոշակի բացեր, որոնք դժվարություններ են առաջացնում այս ճանապարհին:

1948թ. ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան ինքն ունի որոշակի բացեր: Ցեղասպանություն կատարելու համար պետություններին պատասխանատվության ենթարկելու հարցը հստակորեն արտացոլված չէ այդ կոնվենցիայում: Նրանում խոսվում է հիմնականում՝ ցեղասպանության հանցագործության մեջ մեղադրվող անձանց արդարադատությանը հանձնելու մասին, բայց չկան որոշակի դրույթներ, որոնցով պատասխանատվության պետք է ենթարկվի ցեղասպանություն իրականացրած պետությունը<sup>44</sup>:

Այս իմաստով պետք է նշել, որ ավելի քան կես դար առաջ ընդունված կոնվենցիան կարող է լուրջ բարեփոխումների, որոնցով նախ՝ կհատակեցվեն ցեղասպանություն իրականացրած պետության պատասխանատվության հարցը և այն մեխանիզմները, որոնցով պետք է պատասխանատվության ենթարկվեն նման պետությունները: Բացի այդ՝ կոնվենցիայում պետք է ավելացվեն նոր դրույթներ, որոնք կվերաբերվեն մշակութային ցեղասպանություն իրականացնող պետություններին պատասխանատվության կանչելուն:

Ակնհայտ է, որ տվյալ կոնվենցիայի բարեփոխման նախաձեռնությունը իրենց վրա պետք է վերցնեն այն երկրները, որոնք մտադիր են պատասխանատվության կանչել նման հանցագործություն կատարած պետություններին: Հայաստանի Հանրապետությունն, անշուշտ, կարող է հանդես գալ 1948թ. կոնվենցիայի բարեփոխման նախաձեռնությամբ, ինչի արդյունքում ավելի դյուրին կլինի տվյալ փաստաթղթի վրա հիմնվելով՝ պատասխանատվության կանչել Թուրքիային: Այդ հարցում մեր երկիրը կարող է օգտվել նաև այն երկրների և միջազգային կազմակերպությունների աջակցությունից, որոնք ընդունել են Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր և հասնել նշված կոնվենցիայի բարեփոխմանը:

Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացի համար չափազանց կարևոր են նաև իրավական մեխանիզմների և հաջորդական ու նպատակային քայլերի հստակեցման հարցերը: Այստեղ է, որ ծագում է նաև Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հարցում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի և Միջազգային քրեական դատարանի իրավասությունները պարզելու խնդիրը և նման քայլերի դիմելու նպատա-

44 Տե՛ս Конвенция ООН 9 декабря 1948 года “О предотвращении преступления геноцида и наказания за него”.



կահարմարության հարցը:

Նշված հիմնախնդիրների քննարկումից պարզ երևում է, որ Հայոց ցեղասպանության հետևանքների լիարժեք վերացման համար նախնառաջ հարկավոր է մշակել «Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համազգային հայեցակարգ», որտեղ որոշակիորեն արձանագրված կլինեն մեր ռազմավարությունն ու մարտավարությունը, այսինքն՝ փոխկապակցված ու հետևողական քայլերի այն հաջորդականությունը, որը խնդրի հանգուցալուծման պահին՝ Թուրքիային պատասխանատվության կանչելու ժամանակ, մեզ կդարձնի հնարավորինս անխոցելի և զգալիորեն կմեծացնի հաջողության հասնելու հավանականությունը: Ընդ որում, այս գործառույթներում պետք է ընդգրկվեն համապատասխան մասնագետներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Սփյուռքից:

Հիշատակված հայեցակարգը պետք է լինի համակողմանի և ընդգրկի իր մեջ նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են Օսմանյան կայսրության և հետագայում քեմալական Թուրքիայի կողմից հայ ժողովրդին հասցրած նյութական վնասների հատուցումը<sup>45</sup>, համապատասխան միջազգային կառույցների ներգրավմամբ ներկայիս Թուրքիայի կողմից հայ ժողովրդի ստեղծած քաղաքակրթական արժեքների նկատմամբ իրականացվող մշակութային ցեղասպանության կանխարգելումն ու այդ ժառանգության պահպանումն ու վերականգնումը:

Հայեցակարգի անկյունաքարն են լինելու միջազգային-իրավական հիմնավորումները, որոնք էլ հիմք են նախապատրաստելու Հայոց պահանջատիրության համար: Ուստի այս ուղղությամբ պետք է կատարվեն լուրջ աշխատանքներ, որոնց համար անհրաժեշտ է.

**առաջին**, ուսումնասիրել այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ցեղասպանությունների դատապարտման գործընթացներն ու համապատասխան միջազգային դատական ատյաններում ընթացած դատավարությունները, ինչպես նաև տվյալ հանցագործության հետ առնչվող մասնավոր դատական գործերը,

**երկրորդ**, ուսումնասիրել ցեղասպանության հանցագործությանը վերաբերող միջազգային պայմանագրերն ու կոնվենցիաները և դրանց բարեփոխման հնարավորությունները՝ Թուրքիային միջազգային-իրավական պատասխանատվության կանչելու տեսակետից,

**երրորդ**, հարկավոր է լուրջ քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած միջազգային կառույցներում ու առանձին երկրներում՝ նրանց գործնական աջակցությունն ու օժանդակությունը ստանալու համար՝ այն դեպքում, երբ կհասունանա որևէ միջազգային դատական ատյանում Թուրքիային պատասխանատվության կանչելու պահը:

**Ամփոփելով**, նշենք, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում այլևս սխալվելու իրավունք չունենք, քանզի դա կարող է ճակատագրական լինել մեր ժողովրդի համար:

45 Տե՛ս «Վեմ»-ի սույն համարում հրապարակվող Ա. Աստոյանի հոդվածը:

## Summary

# THE QUESTION OF THE TURKEY'S INTERNATIONAL-LEGAL RESPONSIBILITY

(Conclusion and proposals)

*Armen Ts. Marukyan*

The Armenian Genocide is a historical reality awaiting today its international-political and international-legal resolution. Armenian historians have done a great job studying and presenting that crime of genocide committed against the Armenian people. Now it is high time to transfer the issue onto the international legal ground and, based on irrefutable facts, present well founded demands from the Republic of Turkey, the legal successor of the Ottoman Empire.

There are, of course, problems and complications of international-legal, as well as of political character involved; however, with the formulation of “a pan-Armenian conception concerning the elimination of the aftereffects of the Armenian Genocide,” it is possible to overcome these difficulties and achieve the restoration of the rights and interests of the Armenian people, and the elimination of the aftereffects of the Armenian Genocide.